ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էյչ վի էյ սի սերվիս ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/03 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Օդորակիչ 9000 BTU՝ սպլիտ, ինվերտորային, տաքացնող և հովացնող, գույնը՝ սպիտակ, ներքին բլոկի աղմուկի մակարդակը՝ առավելագույնը 45 դեցիբել, արտաքին բլոկի աղմուկի մակարդակը՝ առավելագույնը 55 դեցիբել, էներգախնայողության դասը՝ առնվազն A, էլեկտրասնուցման լարումը՝ 220-240Վ/50Hz, հովացուցիչ նյութ (refrigerant) R410A կամ R32, հեռակառավարման վահանակով, աշխատանքային ռեժիմը ձմռան պայմաններում՝ առնվազն -15 աստիճան ցելսիուս: Անհրաժեշտ հենակը, մալուխները և խողովակները մինչև 5մ (ըստ անհրաժեշտության) տրամադրում է Վաճառողը անվճար: Օդորակիչները պետք է լինեն չօգտագործված և գործարանային փաթեթավորմամբ: Օդորակիչների տեղափոխումն ու բեռնաթափումը Գնորդի պահեստ կամ օդորակիչների մատակարարման ժամկետում Գնորդի ծանուցմամբ (գրությամբ կամ էլ. փոստի միջոցով) օդորակիչների տեղադրման կոնկրետ վայր (Երևան քաղաքի և/կամ ՀՀ մարզերի դատարանների վարչական շենքեր) իրականացնում է Վաճառողը: Օդորակիչների մատակարարման ժամկետում չտեղադրված օդորակիչների տեղափոխման, 24 ամսվա ընթացքում տեղադրման ծախսերը իրականացվում են Վաճառողի կողմից: Օդորակիչների տեղադրման (ներառյալ տեղադրման համար անհրաժեշտ բոլոր նյութերը), ինչպես նաև վերամբարձ կռունկի ծախսերը իրականացվում են Վաճառողի կողմից: Օդորակիչների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Դատական դեպարտամենտի կողմից ապրանքներն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 3 տարի:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ЭЙЧ ВИ ЭЙ СИ СЕРВИС ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/03 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	